

հայ յեղափոխականները Ռուսիոյ վարձկան գործակալներն են... Եւ օր մըն ալ — 1896-ի Օգոստոսին, երբ Բանկ Օտտօմանի եւ Սամաթիոյ արիւնալի դէպքերէն յետոյ, «Ժիրօնդ» շողենաւր Կ. Պոլսէն Մարսէյլ կը տանէր հայ յեղափոխականները, նոյն ծերունի մանեակը, Վիլհէլմ Լիբկնէխտ, անդէտ, անտեղեակ հայ եւ թուրք իրականութենէն, հրատարակեց նոյն «Փօրվէրց»ի մէջ յօդուածիկ մը այս խորհրդաւոր վերնագրով. «Ռուբլին ուղեւորութեան մէջ» (Der Rubel am Reise)... Իբր թէ Փըրանսական նաւով փոխադրուող Արմէն Գարօ, Հրաչ Թիրեաքեան եւ բանկան մտնող միւս 24 յեղափոխականները Ռուսիայէն կաշառուած մարդիկ էին... Հայոց վատաբախտ շարժման համար բաւական չէին արիւնի հսկայ զոհարելութիւնները — պէտք էին նաեւ բարոյական այսքան ծանր վիրաւորանքներ... Նոյնիսկ բարեկամներու կողմէ :

\* \* \*

Փաղանգ մը կար, ուրեմն արդէն, Փարիզի մէջ, հեղինակաւոր գործիչներու բոյլ մը կար, որ կ'արծարծէր — փոքր ինչ, ի հարկէ, խառնիխուռը — հայկական դատը: Մեզի կը մնար ընդ առաջ զնալ այդ փաքանգին: Ատոր համար Քրիստափոր Ժընեւէն մին միւսի ետեւէ Փարիզ զրկեց իր երիտասարդ ընկերները, Ահարոնեան, Սարգիս Մինասեան եւլն. (1899 թ.):

«Պրօ Արմենիա»ի առաջին թիւը լոյս տեսաւ 1900-ի աշնան վերջերը, Կլէմանտյի մէկ երկար եւ ուժեղ խմբագրականով, որ մեծ հրապարագրի անշուշտ լաւագոյն արտադրութիւններէն էր: Յօդուածը կը կրէր կլէմանտյական վերնագիր մը — Արիւնոտ Թաքը (La main sanglante... Սուլթանի թաթը):

Կը հետեւէր Պրէսսանսէի յօդուածը: Կար նաեւ Պիէռ Բիյեաուէն: Իսկ թերթին ճակատը՝ զարդարուած հինգ նշանաւոր անուններով — Անատօլ Ֆրանս, Կլէմանսօ, Ժօռէս, Պրէսսանսէ, Դը Ռօբերտի (վերջինը ռուս փիլիսոփայ ընկերարան մը, Մաքսիմ Կօվալէվսկիի եւ հայազգի Գամբարովի մտերիմներէն, որ հետագային, ռուս կառավարութեան ճնշման տակ, խնդրեց վերցնել իր անունը «Պրօ Արմենիա»էն): Թերթը նուիրուած լինելով բացառապէս թուրքահայ դատին, անխնայ կը մտրակէր

նաեւ ռուսական քաղաքականութիւնը, որ այնքան չարիքներ հասցուց թուրքահայութեան եւ որու շնորհիւ ի չիք դարձան արւեմտեան ժողովուրդներու եւ պետութիւններու ճիգերը՝ լուծելու հայկական խնդիրը, իրագործելու Բերլինի դաշնագրի եւ Մայիսեան Մէմօրանտումի պահանջած բարենորոգումները: Չնայած թերթի հակառուս, հակացարական ուղղութեան, Կլէմանսօ երբեք չվերցուց իր անունը «Պրօ Արմենիա»ի ճակտէն, անգամ երբ վարչապետ դարձաւ (1906 թ.), գերագոյն պատասխանատու Ռուսիոյ դաշնակից Ֆրանսայի արտաքին քաղաքականութեան: Պետերբուրգի մէջ, անշուշտ, կը մրմոսային, բայց վազբը դուրս էր ցարական սպասաւորներու ազդեցութեան սահմաններէն:

«Պրօ Արմենիա»ի փաղանգը նոյնն էր, որ քիչ առաջ մղեր էր յաղթականօրէն դադափարային աննախընթաց ճակատամարտ մը: Աշխարհահռչակ անունները միանգամայն երաչխիք էին թերթի լրջութեան, հմայքին ու տարածման: Եւ Փրանսահայ օրգանը անմիջապէս փարիզեան ընտրանիի ուշադրութիւնը դրաւեց, աւելի քան ոեւէ այլ թերթ, ճնշուած ազգերու դատին նուիրուած: Տեղը չէ հոս խօսելու այդ օրգանի կատարած աշխատանքի մասին, ոչ ալ այն մասին, թէ ի՞նչ ազդեցութիւն ունեցաւ առհասարակ Կլէմանսօններու սկսած հայասիրական շարժումը որոշ կառավարութիւններու, մասնաւորապէս Փրանսական կառավարութեան վրայ, Դէլիասսէի նախարարութեան երկարատեւ շրջանին եւ թէ ի՞նչ չափով այդ բոլորն ազդեց Ելզըզ Քեօսկի եւ մեր դէպքերու ընթացքին վրայ, ի՞նչ չափով կարողացաւ կանխել կամ սահմանափակել զանգուածային կոտորածները եւայլն: Այդ ազդեցութիւնը բնաւ այնքան արհամարհելի չէ, ինչպէս կը խորհին մեր երգուեալ յոռետեսներն ու «անցեալի մարդարէները» (անցած դէպքերը գուշակողներ) մասնաւորապէս մեր նոր, մատաղ սերունդին մէջ: Դէպքերու վրայ նայելու է ոչ 1920-1929ի ակնոցներով, երբ համաշխարհային պատերազմն ու բոլշեւիկեան ժանտախտը աւերեցին ու պարպեցին հայրենիքը եւ ջնջեցին հողմերու մէջ ստեղծագործուած մեր ազատ Հանրապետութիւնը — այլ 1912-1914 թուականներու